

բարձր կանգնուած սեղանը չ'անջատեր եկեղեցիէն, այլ խորանին վրայ է, եւ այնչափ բարձր՝ որչափ որթողոքս եկեղեցեաց խորանի կողմնական դռներն կ'ըլլան. սակայն խորանը շատ մեծ վարագուրով մը կը ծածկուի²⁵: Եկեղեցեաց յատակը տախտակամած է եւ գորգով կամ նմանեօք ծածկուած. վասն զի հաւատացեալք քանի մ'աղօթից ժամանակ մոճակով պէտք է որ մնան:

Պատարագիչ քահանայն իւր պատարագչութեան ամբողջ շաբաթը եկեղեցւոյ գաւթին մէջ, եւ կամ եթէ այս չկայ, եկեղեցւոյ քով սենեկի մը մէջ պիտի ննջէ²⁶:

Արեւելեան Հայք մեռոնը Էջմիածնի Կաթողիկոսէն կ'ընդունին²⁷:

Պուքովինայի եւ Կալիցիոյ բովանդակ արեւելեան Հայերն Սուչավայի արեւելեան հայ ժողովրդապետութեան կը վերաբերին²⁸: Կէօլէրթի ըսածը²⁹ թէ Սուչավայի արեւելեան Հայք երկու ժողովրդապետութիւն ունին, ճիշդ չէ. թէեւ ի Սուչավա երկու ժողովրդապետ կայ, սակայն ասոնք ժողովրդապետութեան մուտքը կը բաժնեն իրենց մէջ, եւ մէկը կ'ընդունի 1000 ֆլ. եկամուտ, միւսը 700 ֆլ.:

Սուչավայի արեւելեան հայ ժողովրդապետութեան կը վերաբերի նաեւ Կուրա-Հոմորուլուի գանուող 10—15 տնէ բաղկացեալ հայ գաղթականութիւնը, որ եւ այն տեղ հաստատուն նիւթէ շինուած գեղեցիկ եկեղեցի մ'ունի Ս. Գէորգ անուամբ, որուն դրամը գու-